Թիֆլիս, 15 հոկտեմբերի

## ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՐՔԸ

—

Տօնական հանդէսները վերջացան. հազիւ մի շաբաթ էլ խօսք ու զրոյց լինի տեղի ունեցած տօնական երեւոյթների շուրջը. և դեռ այդ մի շաբաթն էլ գուցէ շատ համարի սպառելու համար ստացած տպաւորութիւնները, որ ահա մեր հասարակութիւնը սովորական դէպքերի նման ժողովրդական այս հսկայ տօներն ևս յանձնի մոռացութեան. և լաւ դէպքում, շատ շատ միայն խուլ յիշողութիւն պահի տառերի գիւտի 1500 և տպագրութեան 400 ամեակների մասին,

Ցեղային գիտակցութեան մէջ ունեցած մեր մեծ տնանկութիւնը և առհասարակ հայի անփոյթ վերաբերմունքը դէպի իր կուլտուրական ձեռնարկութիւնները՝ հազիւ թէ ունենայ մի այլ ենթակայ ցեղ։ Այդ կողմից անտարբերութեան դափնին հային է պատկանում։ Բայց բաւական չէ նկատել փաստն ու լռել. ընդհակառակը միշտ էլ հարկաւոր է շեշտել այդ ախտանիշ երեւոյթների վրայ և մտածել նրանց առաջն առնելու մասին, իսկ այդ անելու պարտքն ամենից առաջ ընկնում է հայ գիտակից տարրի վրայ։ Բարեմաղթութիւններն ու շնորհաւորութիւնները բաւական չեն մի ժողովրդական Մեծ Տօն փառաւորելու համար, որքան էլ նրանք լինին յաւուր պատշաճի. աւելի դրական ու շօշափելի տւեալներ են պէտք դրա համար։ Օրինակ. երբ հրապարակում տօնը յաւերժացնելու կոթողներ են դրւած՝ դպրոցական ու գրական ֆոնդերը և անարձագանք են մնում, այս դէպքում ամեն տեսակի հեռագիրներ ու մաղթանքներ արժէք չունեն և կարող են միայն ժողովրդի սնապարծութեան նշան նկատւել։ Տօնի փառաւորութեան իսկական ապացոյցը լինելու է այդ ֆոնդերի յաջողութիւնը. նրանց իրագործումը միայն ցոյց կը տայ թէ որքան բուռն ու անկեղծ է եղած հայութեան վերաբերմունքը դէպի իր համազգային Մեծ Տօնը։

Ներկայումս նպատակ չունենք ֆոնդերի հաշիւներով զբաղւել ու մանաւանդ որ ժողովրդական նւէրները նոր են սկիզբ առել. ժամանակին մենք կը դառնանք այդ կարեւոր խնդրին. այժմ մեզ հետաքրքրողը այն միտքն է թէ ինչպէս կը տօնէին օտարները մի այդպիսի մեծ տօնը, օրինակ, հէնց լեհացին կամ հրէան. մենք այս ասելով քաւ լիցի, երբէք նպատակ չունենք համեմատւելու այդ երկու գիտակից ցեղերի հետ։ Մեր ցանկութիւնը այստեղ զուտ հոգեբանական է։ Մի ցեղ ինչպէս հրէան է, որ ունի ազգային սնդուկ, որի դրամագլուխը 10 միլիոն րուբլուց աւելի է և գործադրում է իր ժողովրդի կարիքներին, կամ լեհացին, որ տարւայ մէջ մի օրւայ մասգինը նւիրաբերում է մայրենի դպրոցների կարիքներին, կարծում ենք, նրանք մեզ պէս չէին տօնիլ. սակայն մեզ մնում է նրանց օրինակին հետեւել և մեր Համազգային Մեծ Տօնը անջնջելի դարձնել համաժողովրդական մի կամաւոր տուրքով, որի դրամները կը գանձւի ամեն տարի Հոկտեմբերի 13-ին և կը յատկացւի արդէն սկիզբ դրած Դպրոցական և Գրական ֆոնդերին։ Այնպէս որ Հոկտեմբերի 13-ը հայութեան համար կը ճանաչւի մի պարտաճանաչութեան օր և ամենքն էլ այդ օրը յօժարակամ կը նւիրաբերեն իրենց կոպէկները ազգային կուլտուրայի այդ երկու խոշոր հիմունքներին՝ դպրոցին և գրականութեան։ Եւ այսպիսով ժողովրդի մէջ կենդանի կը մնայ գիրն ու գրականութիւնը և գուցէ թէ սա սկիզբն դառնայ այն մեծ ինքնաճանաչութեան, որ անհրաժեշտ է ցեղի ինքնուրոյնութեան պահպանման տեսակէտից։

Ուրեմն, Հոկտեմբերի 13-ը թող համարւի հայ ժողովրդի ինքնագիտակցութեան առաջին օրը։

---

## Կ.-ՊՈԼԻՍ

5 սեպտեմբեր

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ

—

Ազգային ժողովնիս հիւանդ է, անբուժելի ախտէ մը բռնուած։

Ախտը ցուցանշական է։ Մեզմէ շատ աւելի երջանիկ երկիրներու մէջ քանի մը ծայրայեղ—անիշխանական և սէնդիքալիստ տարրեր երկար ատեն է որ կը մարգարէանան թէ պառլամենտարիզմը, ներկայ ընտրական սկզբունքը՝ իր բոլոր ձեւերով - թէ հանրաքուէ, թէ սահմանափակ ընտրական իրաւունքը, թէ համեմատական ձեր - ամենքն ալ սնանկ են. եւրոպացին այլ ևս չի շահագրգռուիր ներկայացուցչական կառավարական ձեւով։ Ու ապացոյց կը բերէին Արեւմտեան Եւրոպիոյ շատ մը երկիրներու մէջ գտնուած անտարբերութիւնը դէպի պառլամեններու ընտրութիւնները։ Ախտի անունն է ձեռնպահութիւն — հետաքրքրութեան նւազում կամ ուղղակի՝ անտարբերութիւն։

Սակայն անարշիստներուն պատասխանեցին ընկերվարական գրողները թէ աշխատաւոր զանգւածներն անտարբեր են դէպի պառլամենտական ընտրութիւնները այն պատճառով որ պուրժուազին իր ձեռքն առած է ամեն ինչ և թոյլ չի տար օրէնսդիր մարմիններուն ոևէ հանրօգուտ կամ աշխատաւորութեան օգտին ծառայող քայլ մը ընել. եթէ ընտրական օրէնքները աւելի ռամկավար ոգիով մը ընդլայնուին, անկասկած՝ ժողովրդի հսկայ մեծամասնութիւնը—գիւղացին ու բանւորը—տեսնելով պառլամենթի մէջ պիտանի զէնք մը իր շահերը պաշտպանելու, կաճապարէ մասնակցութիւնը բերելու անոր ընտրութիւններուն։

Մեր Ազգ. Ժողովն ալ վարակւած է նոյն անտարբերութեան ցաւով։ Սակայն մեր մէջ մինչև ընտրութիւնները արհեստական կերպով տրամադրութիւնը գէթ արտաքուստ—վառ կը պահեն. կը գրեն, կը հայհոյեն քիչ մը բոլոր կուսակցականները, քիչ մը Դաշնակցութիւնը, սրտառուչ բառերով, «զըրմէն կերան»-ի պէս գռեհիկ ասիական բացականչութիւններով կը հրաւիրեն ընտրողները քւէատուփ և… արդիւնքը. Բերայի մէջ, օրինակ—2000 ընտրողներէ մասնակցելու կուգայ հազիւ 3—450 հոգի, ան ալ 350 դաշնակցականներ, իսկ մնացեալ 100-ը հնչակեան, սահմ. ռամկավար, մեծ ադամներ կամ, ինչպէս սիրուն բառ մը հոս կացուցեր են — ծերիարքներ…

Իսկ ընտրելը վերջացնելէ յետոյ՝ այդ քիչիկ մը հետաքրքրութիւնն ալ կը մարի. ընտրեալը մէկ-երկու անգամ կուգայ, քանի մը խօսք կը կմկմայ — 100-էն 99-ը ինչպէս որ կը կմկմայ… ու այնուհետև այլ ևս adieu Ազգ. Ժողով… այլ ևս նիստերուն չի յաճախեր։

Եւ ինչո՞ւ պիտի յաճախէ։ Ստակ կը վճարեն, ամսականն կառնէ մի… Մեր աղաները «աթատան-պապատան» սորված են մեթրօն չափել, օխան կշռել ու անոր դիմացը հըմըն իսկոյն ստակն առնել։ Իսկ հոս «պօշ լախըրտիներ» կը զուրցեն անվերջ. ստակ չելլար ատոնցմէ։

Ահա վիճակը պոլսեցի պուրժուային հոգեբանութիւնը։ Նոյն հոգեբանութիւնը կը տիրէ և մտաւորական կոչւած բժիշկ, իրաւաբան, խմբագիր և գրագէտ էֆէնտիներուն մէջ։ Աս մտաւորականները և ոչ մէկ բանով կը տարբերին առևտրական հայերէն իրենց մտայնութիւնով։

Մէկ-երկու տասնեակ մը անուղղայ, իշխանասէր կուգան ամեն ժողովի, կը նստեն, կըսպասեն, զիւանական մանր-մունր հարցեր կը քրքրեն և, անգամ մը ևս հաստատելով որ մեծամասնութիւն չի կայ, կը ցրւին, կերթան տուներնին։ Իսկ այդ մեծամասնութիւնը սև ագռաւի պէս հազւագիւտ է դարեր… Ան ալ նոյն իսկ այն ար-